յաւուրս Մուսաննըֆ Դատաւորին , բայց յայնժամ Ցոյնք ամբաստանեալ էին զՀայս , և Կուսակալն գրով և Թախանձանօք խնդրեաց զնոսա , իսկ այժմ չերևի 'ի մէջի ամբաստանող և ամբաստանեալ։ Քաղաքապետն ցուցանէր դատախազ Հայոց զԲդեշխն և հարկադրէր երթալ և չահել զմիտս նորա , մի գուցէ սրտմտեալ բարկասցի 'ի վերայ նոցա և ածցէ զմեծամեծ չարիս , և Թերևս ասէ՝ խնդրէ ինչ 'ի ձէնջ , և պատկառի զայն յայտնել մեզ։ Զհանդուրժեալ Դատաւորին ընդ խորամանկ բանս Քաղաքապետին , ասէ՝ վասն է՞ր բարկասցի Բդեշխն 'ի վերայ իմ, այլ բարկասցի 'ի վերայ Տէրութեան որ զնախորդն իմ աքսորեաց , զի ոչ յարգանօք ընկալաւ զհրաման նորա և չարաչար մեկնեալ զիմաստս նորին՝ զհակառակն գործեաց , և յետ այնորիկ առաքեաց նոր հրովարտակ , յորում պատուիրէր յետ կատարելոյ զամենայն ինչ ըստ Խաթթը Շէրիֆին , զԲեթղեհէմ և զԱստուածածին օրինօք չէրիի 'ի մէջ երկուց ազգաց բաժանորդ առնել հրամայէր , և բաց յայսմանէ գրեանք առ մեզ և առ Կուսակալն 'ի մեծէ Դենպետէն, յՅպարքոսէն և 'ի Գայմագամ Փաշայէ , և գիր 'ի տեղապահէ Կուսակալին վասն գործադրութեան հրովարտակին , յայնժամ հրաման ետուն հրապարակաւ Մուվէլլայն, Դատաւորն, Քաղաքապետըն և ամենայն այլազգիք երկուց ազգաց լինել բաժանորդ տեղեացն այնոցիկ , այլ Թէ որո՞վ եղանակաւ կատարեն զօրէնս իւրեանց , այն ինքեանց է գիտելի։ Սակայն ժառանգութիւն եկեղեցւոյ 'ի հարկէ պատկերօք , կանթեղօք և այլ իրօք լինի. իսկ այժմ չկարեմ առնել ինչ , մինչև եկեալ իցէ հրաման յԱրքայէ , և այլ սոյին նման բանք բազում։ Լուեալ Քաղաքապետին զայսոսիկ , ոչ ինչ կարաց ասել , միայն ստիպէր զՀայս առաքել զօք 'ի Դամասկոս , և նոքա առաջի դնէին նմա զերկիւղ Արքային , մանաւանդ յառաջադոյն միանգամ զփորձ առեալ էին , և անմարթ էր վերստին անկանել 'ի մահաբեր որոգայթ նորին. վերջապէս պնդէր Քաղաքապետն՝ կամ Դատաւորին գրել Իլամ ըստ խնդրոյ Բդեշխին , և կամ Հայոց առաքել զօք առ նա։ Դատաւորն անհնարին համարէր վասն միոյ խնդրոյ երկու կերպ Իլամ գրել , բայց խոստանայր գրել ըստ արժանոյն որպէս պահանջէն իրաւունք օրինաց , իսկ եթէ ոչ բաւա-